ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
OFFICE OF THE PRIME-MINISTER OF THE REPUBLIC OF ARMENIA
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
DEPARTMENT OF INFORMATION AND PUBLIC RELATIONS

Հինգշաբթի, 12 դեկտեմբերի 2019 թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» նախագահ
Շուշան Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան,

ի պատասխան Ձեր գրության՝ ստորև ներկայացվում է Երևանի քաղաքապետարանից ներկայացված տեղեկատվությունը.

Նախկինում «Երևան քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների կոմպլեքսային պահպանման և օգտագործման» նախագծով (Երքաղխորհրդի գործկոմի կողմից հաստատված 17.04.1991թ. հ.6/18 որոշմամբ) մոտ 750 հա մակերես կազմող սահմաններով առանձնացված է եղել «Դալմայի այգիներ-Սարդարի այգի» գոտի, սակայն սահմանները փոփոխվել են, քանի, որ հետագայում այդ որոշումը (նաև նախագիծը) Երևանի քաղաքապետի 2002թ. օգոստոսի 30-ի հ.1137 որոշմամբ ճանաչվել է ուժը կորցրած:

ՀՀ կառավարության 2003թ. մարտի 27-ի «Երևանի Դալմայի այգիների պահպանման ենթակա հողերի սահմանների և նպատակային նշանակության փոփոխության մասին» հ.1941-Ա որոշման հիման վրա Դալմայի այգիների սահմաններն ամրագրվել են 256 հա մակերեսով և տեղայնացվել է Երևանի քաղաքապետի 2004թ. մայիսի 25-ի հ.918-Ա որոշմամբ, ու թողարկվել է 2007թ. սեպտեմբերի 28-ի հ.4103-2007թ. գլխավոր հատակագիծը:

ՀՀ կառավարության 2004թ. հոկտեմբերի 21-ի «Երևանի քաղաքապետին առանց մրցույթի հողամասերի վարձակալության պայմանագրեր կնքելու թույլտվություն տալու մասին» հ. 1530-Ն որոշմամբ Երևանի քաղաքապետին թույլատրվել է Դալմայի այգիներում գտնվող 256.0 հեկտար մակերես ունեցող անտառային հողերից առանց մրցույթի, մինչև 10 տարի ժամկետով, վարձակալությամբ տրամադրել Երևանի Շահումյանի նախկին շրջգործկոմի և Մալաթիա-Սեբաստիայի թաղապետարանի միջև 2004թ. մարտի 31-ը կնքված վարձակալության պայմանագրերի հիման վրա հողամասերն զբաղեցնող քաղաքացիներին:

Հետագայում ՀՀ կառավարության 2015թ. հունիսի 25-ի «Երևանի քաղաքապետին առանց մրցույթի հողամասերի վարձակալության պայմանագրեր կնքելու լիազորություն տալու

Հեռախոս՝ (374 10) 52-87-12
Phone: (374 10) 52-87-12
Էլ.փոստ՝ press@gov.am
Կայքէջ՝ www.gov.am

մասին» հ.703-Ն որոշմամբ՝ Երևանի քաղաքապետին լիազորվել է Հայաստանի Հանրապետության անունից կնքել համաձայնագրեր Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. հոկտեմբերի 21-ի հ. 1530-Ն որոշման 1-ին կետի հիման վրա կնքված վարձակալության պայմանագրերի գործողության ժամկետները մինչև 2025թ. դեկտեմբերի 31-ը երկարաձգելու մասին:

ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 15-ի «Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը /2005-2020թթ./ հաստատելու մասին» հ. 2330-Ն որոշման համաձայն Երևանի Դալմայի այգիների պահպանման ենթակա հողերի սահմանները ամրագրվել են Երևանի գլխավոր հատակագծում՝ հիմք ընդունելով վերոհիշյալ ՀՀ կառավարության 2003թ. մարտի 27-ի հ.1941-Ա որոշմամբ սահմանված 256 հա մակերեսով:

«ՀՀ Երևանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» ՀՀ կառավարության 2009թ. դեկտեմբերի 24-ի հ.1517-Ն որոշման Երևան քաղաքի հողային հաշվեկշռի սխեմայի համաձայն 256 հա տարածքը ընդգրկված է եղել անտառային նշանակության հողերի կատեգորիայում:

ՀՀ կառավարության 2018թ. հունվարի 11-ի «Ներդրումային ծրագրին հավանություն տալու «Պարկ Գրուպ» ՍՊԸ-ն առանց մրցույթի հողամաս տրամադրելու մասին» հ.5-Ա որոշմամբ հավանություն է տրվել ընկերության կողմից ներկայացված մանկական, երիտասարդական, ընտանեկան հանգստի և ժամանցի կենտրոն ստեղծելու ներդրումային ծրագրին և առաջարկվել է Երևանի քաղաքապետին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Մոնթե Մելքոնյան փողոցին հարակից տարածքում գտնվող 27.66 հա պետական սեփականություն հանդիսացող անտառային ֆոնդի հողերի նպատակային նշանակության փոխադրումը հատուկ պահպանվող տարածքների հողերի նպատակային նշանակության (Երևանի ավագանու 13.01.2018թ. հ.119-Ա «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» որոշում, Երևանի քաղաքապետի որոշումներ 12.02.2018թ. հ. 418-Ա, 14.02.2018թ. հ. 470-Ա):

ՀՀ կառավարության 2004թ. մարտի 31-ի «Տարածքների գոտիավորման և հողերի նպատակային նշանակության փոփոխության մասին» հ.397-Ա որոշմամբ հաստատվել է Երևանի Աթենքի, Լենինգրադյան, Սեբաստիա փողոցների և Ծովակալ Իսակովի պողոտային հարող տարածքների գոտիավորման սխեման և դրան համապատասխան փոփոխվել են նշված հողերի նպատակային նշանակությունները (կատեգորիան):

Ծիծեռնակաբերդի խճուղուն հարող տարածքում կառուցապատման թույտվություններ են տրամադրվել՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 15-ի հ. 2330-Ն որոշմամբ հաստատված «Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը /2005-2020 թթ./: Երևան քաղաքի գլխավոր հատակագիծն անցել է անհրաժեշտ համալիր փորձաքննություն, այդ թվում նաև՝ բնապահպանական: Գոտում առկա են հնագիտական ռեսուրսներ՝ հինգհազարամյա գործող ջրանցք, խաղողագործության նախկին վայրեր և այլն:

Քննարկվող հատվածի համար առկա են նաև «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից մշակված հետևյալ աշխատանքները՝

1. Իսակովի պողոտայով, Լենինգրադյան և Աթենքի փողոցներով պարփակված տարածքների գոտիավորման և կառուցապատման նախագծի մշակում 2014թ.:

2. Երևան քաղաքի համար քաղաքաշինական ծրագրերի մշակման աշխատանքների շրջանակում՝ Երևանի «Դալմայի այգիներ» անտառպուրակային պատմամշակութային համալիրի ստեղծման ծրագրի մշակում 2017 թ.:

«Երևանի զարգացման 2020 թվականի ծրագրի նախագծի մշակման աշխատանքները կազմակերպելու մասին» հ.3762-Ա որոշման՝ «Քաղաքաշինություն և ճարտարապետություն» ոլորտին վերաբերվող թեմաներում առաջարկվել է «Երևանի Մոնթե Մելքոնյան փողոցի արևմտյան հատվածի կառուցապատման կարգավորման նախագծի և Ծովակալ Իսակովի պողոտա-Արշակունյաց պողոտա նախագծային մայրուղուն հարող տարածքի (Պասկևիչի բլուրից հարավ) գոտևորման և կառուցապատման էսքիզային նախագծերի մշակում»:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ից ստացված տեղեկատվության համաձայն՝ Դալմայի այգիներից 256 հա տարածքն ընդգրկված չէ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հողային հաշվեկշռում:

Կից տրամադրվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից ներկայացված Դալմայի այգիներում կամ հարակից տարածքներում տրամադրված շրջակա միջավայրի վրա ազդեցության թվով 3 փորձաքննական եզրակացությունները:

Կատարող՝ Երևանի քաղաքապետարան

Վարչության պետի պաշտոնակատար
Արմեն Խաչատրյան